**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

## ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 23 հուլիսի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ռ. Պապայանի
Անդամակցությամբ՝ Հ. Դանիելյանի
Մ. Թոփուզյանի

Ուսումնասիրելով «ԲՋՆԻ» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ- ի անհատական
դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

**ՊԱՐԶԵՑ.**

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ «ԲՋՆԻ» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ն 2010թ. հուլիսի 17-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով քննության առնել եւ որոշել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 1-ին, 18-րդ և 19-րդ հոդվածների պահանջներին:

Տվյալ անհատական դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքներով հիմնավորված է, որ սույն դիմումն ակնհայտ անհիմն է, քանի որ դիմողի կողմից փաստորեն անտեսված է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի պահանջն առ այն, որ դիմողի նկատմամբ գործը լուծող վերջնական դատական ակտով

անհրաժեշտաբար պետք է կիրառված լինի որեւէ օրենքի դրույթ կամ դրույթներ: Ներկայացված եւ ուսումնասիրված դատական ակտերից անվերապահորեն հետեւում է, որ դիմողի նկատմամբ ընդհանուր իրավասության դատարանների կողմից ակնհայտորեն կիրառված չէ խնդրո առարկա իրավադրույթը, այն է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասը: Վերջինս, ըստ էության /համաձայն դատական ակտերի/, չի հանդիսացել իրավական վեճը լուծող, իրավաբանական փաստին վերջնական գնահատական տվող իրավանորմը, ինչն օրենքի դրույթի՝ դիմողի նկատմամբ կիրառված լինելու հիմնական և վճռորոշ պայման է: Դատական կազմն արձանագրում է, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում նշված որևէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ:

Բացի դրանից, դիմողն իրավաբանորեն չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի եւ վիճարկվող դրույթի միջեւ անմիջական պատճառահետեւանքային կապի ուղղակի առկայությունը /ՀՀ սահմանադրական դատարանի 2009թ. մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշման 6-րդ, 8-րդ եւ 9-րդ կետեր/:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետով, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 26-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

**ՈՐՈՇԵՑ.**

«ԲՋՆԻ» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

**Նախագահող՝**
**Անդամներ՝**

23 հուլիսի 2010 թվականի
ՍԴԴԿՈ/2-26